



Էկոլոգիական հասարակական դաշինք

ՀՀ Քաղաքաշինության նախարար պարոն
Ս.Թադևոսյանին

Կրկնօրինակը

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների
նախարար `պարոն Ա.Մովսիսյանին

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Ա.Երիցյանին

ՀՀ Բնապահպանության նախարար պարոն Ա.
Հարությունյանի

ՀՀ Առողջապահության նախարար պարոն
Դ.Դումանյանին

Հարգելի պարոն նախարար

Ղեկավարվելով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀօրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածներով խնդրում եմ տրամադրել ՀՀ-ում առկա պոչամբարների, դրանց փաստացիվ իճակի, ինչպես նաև պոչամբարների հետ առնչվող իրավական նորմերի և նորմատիվ այլ պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ-ում առկա պոչամբարների ցանկը, դրանց կարգավիճակը և փաստացի վիճակը (օգտագործման կամ սեփականության իրավունքով պատկանելիությունը, գործող, կոնսերվացված, լքված, կառուցվող, զբաղեցրած տարածքը և ծավալները):

Ինչպիսի իրավական, տեխնիկական, սանիտարական, անվտանգության նորմերի,կամ այլ պարտադիր պահանջների պետք է բավարարի պոչամբարների կառուցման տեղի ընտրությունն ու կառուցման գործընթացը:

Ինչ պահանջների պետք է բավարարեն պոչամբարների կառույցները, ինչ իրավական նորմերով, պարտադիր կատարման ենթակա փաստաթղթերով, կամ այլ չափորոշիչներով են բնութագրվում և գնահատվում շրջակա միջավայրի վրա պոչանքների տեխնոլոգիական ազդեցությունը, դրանց տեսակները, վտանգավորության աստիճանը:

Որոնք են պոչերի երկրաբանա-տնտեսագիտական ռեսուրսային ներուժի որոշման սկզբունքները: Ինչ պահանջների պետք է բավարարի պոչամբարների ռեկուլտիվացիան և կոնսերվացիան և որոնք են այդպահանջները սահմանող իրավական նորմերը, կամ պարտադիր կատարման ենթակա այլ փաստաթղթերը: Որոնք են կառուցման ինժեներա-երկրաբանական և կայունության մոնիտորինգի չափորոշիչները և իրավական հիմքերը:

Հարգանքով` Էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող `Ս.Ադամյան

5.02.2014